Վ Ապրիլին Հայաստանի Ազգային Ժողովին մէջ Պրիւորուսիա - Ռուսիա միութեան Հայաստանի անդամակցությունեան պատգամաւորական նախաձեռնությունեան անդամները ստորագրություններ սկըսած են հաւաքել այս հարցով Ազգային Ժողովի արտահերթ նիստ հրաւիրելու համար:

Այս գծով պատգամաւոր Ադախ Արշակեան լրագրողներուն ըսաւ, որ պատրաստուած է Ազգային Ժողովի որոշման նախագիծի երեք տարբերակ, որոնցմով մասնաւորապէս Հայաստանի նախագահին կ'առաջարկուի յիշեալ միությունեան Հայաստանի անդամակցությունեան հարցով Սեպտեմբերին հանրաքուէ կայացնել:

Ան նչեց, որ միայն իրենց նախաձեռնությունեան անդամներու ստորագրությունները բաւարար են արտահերթ նիստ հրաւիրելու համար (այս նիստը հրաւիրելու համար կը պահանջուի Լէ պատգամաւորի ստորագրություն):

# ՀՕՄԸ ԻՐ 5ԻԴ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՂԸ ՊԻՏԻ ԲԱՆԱՅ ՔԱՐԻՆՏԱԿԻ ՄԷՋ

Հայ Օգնությունեան Միությունեան Արցախի կազմակերպություններ իր 5րդ մանկապարտէզը պիտի բնայն Ծուշիի շրջանի Բարինտակ գիւղին մէջ: Մանկապարտէզի նախապատրաստական աշխատանքները արդէն իսկ ընթացքի մէջ են: Դպրոցը պիտի ընդունի շուրջ 50 նախադպրոցական տարիքի երեխաներ:

Հեռանալին Հարաբաղի Հայաստանությունեան արտաքին գործոց նախարարությունները հաղորդեց, թէ ՀՕՄԻ աջակցությունեամբ Ստեփանակերտի մէջ բացուած է նաեւ «Միւրուն Օփթիք» ակնոցի կեդրոնը, որ ամսական 30 ակնոցներ կը նուիրէ գոհուած ազատական սիրտիկներու ընտանեկան պարագաներուն, Համաշխարհային Բ. Պատերազմի վեթերաններուն, Արցախեան ազատամարտի հաշմանդամներուն եւ միասնակ թոշակառուներուն:

Յայտնենք, թէ ՀՕՄՐ մասնաճեղքեր ունի 23 երկիրներու մէջ: Ներկայիս աշխատանք կը տանի որբերու հոգատարությունեան իր ծրագիրը իրականացընել նաեւ Հարաբաղի մէջ, որուն համապէս 3700 երեխաներ, մինչեւ 18 տարեկան դառնալը, ամսական 120 տոլար պիտի ստանան:

# ՃԱՆՈՒՑՈՂՆԵՐՈՒ ՌՈՇԱՎԿՈՒԹԵԱՆ

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակելի փափաքողներէ կը խնդրուի ծանուցումիւ բնագիրը ընթեռնի գիրով (հաստատությունեանց պարագայի)՝ ցանկարտաբար պաշտօնական թղթի վրայ, եւ՝ հաստատուած՝ գերկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենեակը:

# 27 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՈՃՐԱՅԻՆ ԱՐԱՐՔ ԵԹԷ ՃԵՄԱՐՏՈՒԹԻԲԵՐ ՉԲԱՅԱՅԱՅՏՈՒԻ, ԲԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՋՈՅԻ ՊԻՏԻ ԴԻՄԵՔ ԿԸՍԵ ԱՐԱՍ ՍԱՐԳՍԵԱՆ

3 Ապրիլին նորաստեղծ Հանրապետությունեան կուսակցությունեան քաղաքական խորհուրդի մամուլայն աւուլիսի ընթացքին նախկին վարչապետ Արամ Սարգսեան, անդրադառնալով 27 Հոկտեմբերի ոճրային արարքի դատարարությունեան գործընթացին, յոյս յայտնեց, որ ճշմարտությունները բացառապէս: Ան ըսաւ, թէ ինքն իրեն իրաւունք պիտի վերապահէ քաղաքական միջոցով ճշմարտությունեան հասնելու, եթէ անիկա դատավարությունեամբ չբացայտուի:

# Ը.Յ.Դ. ՊԱՏՄԱՍԻՐԱԿԱՆ ԽՍՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻՆ ԸԱՍԱԶԱՅ

# ԱՉԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԴԱՍԱԴՐՈՒՄՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԿԱՐԵՒԻ Ե ԽՕՄԻԼ «ՄԻԱՍՆՈՒԹԻՒՆ» ԴԱԾԻՆՔԻ ԼՈՒԾՈՒԼԷՆ ԵՏԶ ՄԻԱՅՆ

Հինգշաբթի, 5 Ապրիլին, Ազգային Ժողովի Հ.Յ.Դ. պատգամաւորական խմբակցությունեան ներկայացուցիչ Ադուան Վարդանեան, ճեպագրոյց մը ունենալով լրագրողներուն հետ յայտնեց, թէ Ազգային Ժողովի մէջ քաղաքական մեծամասնությունեան հարցը ներկայիս «Միասնությունեան» դաշինքի հարցն է եւ Հ.Յ.Դ. խմբակցությունները նոր մեծամասնությունեան գծով քննարկումներու պիտի չնախաձեռնէ:

Նման քննարկումներ կարելի է կատարել «միայն այն պարագային, եթէ յայտարարուի, որ «Միասնությունեան» դաշինքը այլեւս գոյություն չունի, կարելի կ'ըլլայ խօսիլ նոր դաշինքներու, Ազգային Ժողովին մէջ ուժերի նոր վերադաստիարակում մասին», ընդգծեց ան:

Իսկ պատմաստեղծով Ազգային Ժողովի արտակարգ նիստին ելեկտրացանցերու սեփականաշնորհման գծով եղած քննարկումներուն մասին հարցումին, Ա. Վարդանեան յայտնեց, թէ՛ «որչ անհատ պատգամաւորներու անիմաստությունեան հասնող աշխուժությունները բացարձակապէս փաստարկուած չէր»:

# ԿԱԿԱԹՈՅԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ 180ԱՄԵԱԿԻ ԼՇՈՒՄ

2 Ապրիլին, Կալկաթայի հայկական փոքր գաղութը 62եց Մարդասիրական Ծեմարանի հիմնադրութեան 180ամեակը, աներկայութեամբ Կալկաթայի դիւանագրատական գանգում անրկայացուցիչներու:

Այս Ծեմարանը հնդկահայ գաղութի համար երկար տարիներ ոչ միայն կրթական յատկանշական կեդրոն էր եղաւ, այլեւ դարձաւ ազգային ինքնուրոյն դիմագիծի պահպանման միջոց:

Անցնող տասնամեակներուն մեծ եղաւ դերը Կալկաթայի Մարդասիրական Ծեմարանի: Սակայն, վերջին տարիներ զիմագրաւեց դժուարություններ, որոնք կարելի եղաւ դիմագրաւել Ս. Էջմիածնի հոգատար վերաբերումներով: Հայաստանէն ուղարկուած ուսուցիչներու եւ աշակերտությունեան շնորհի կարելի եղաւ վերակենդանացնել Ծեմարանը:

Հնդկաստանի մէջ Հայաստանի դեսպանատունը, որ ստեղծուեցաւ 1999ին, իր օժանդակությունները կը մատուցէ. անաստեղծով Ծեմարանը պահելու կարելու գործի:

Ծեմարանի հիմնադրութեան 180ամեակին առիթով, Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոս լղած է իր օրհնություն գիրքը, ուր կը նշուի, թէ անցնող 180 տարիներուն ընթացքին, կրթական այս կարեւոր հաստատությունները նշանակալի դերակրություն ունեցաւ բազմաթիւ սերունդներու հայեցի կրթությունեան եւ ուսում ջանքերով մէջ. հարասացնելով գանձը հոգեւոր տալու եւ մարդասիրական արժանիքներով:

Վեհափառ Աշած է, թէ այժմ, երբ քիչ է հայութեան թիւը Հնդկաստանի մէջ, Մարդասիրական Ծեմարանը իր դռները բացած է, Հայաստանէն աշակերտներ ընդունելով:

Հնդկաստանի գաղութի հոգաւոր հովիտ ու Ծեմարանի տնօրէն Ղեւոնդ Վրդ. Ղեւոնդեան, ինչպէս նաեւ Ս. Էջմիածնի անրկայացուցիչ՝ Միքայէլ արք. Աշապահեան, Ծեմարանի մէջ կատարեցին մատուցի բացման արարողություններ:

Արարողությունեան սկիզբը իր արտասանած խօսքին մէջ Հնդկաստանի մէջ Հայաստանի դեսպան Արմէն Բայրուրդեան գանգատած է մարդասիրական այս նշանաւոր Ծեմարանը վերակենդանացնելու իրողությունները՝ շեշտելով, թէ Ծեմարանը հիմնադրուած ոգեւորությունները շնորհալ ծանօտացիւ ազգայնաց: Ան ըսած է, թէ պէտք չէ մոռնալ, թէ Ծեմարանէն անցած են Մեմարայ թաղապետներ, Յովհաննէս Աւստիանի եւ այլոց նման ակնառու մտաւորականներ ու դաստիարակներ:

Այնուհետեւ գործադրուած է գեղարուեստական յայտագիր սը Ծեմարանի աշակերտներուն կողմէ, որոնք հայերէն, անգլերէն, ռուսերէն եւ հնդկերէն լեզուներով ելոյթ ունեցած են:

# ՍԵՒԱՆԸ ԽԵՂՂԻՈՒՄ Է ԻԾԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՉԻ ԱՌԱՋ

# ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԼՃԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ Է ՄՇԱԿՈՒՄ

Եթէ 1935 թուականին Սեւանայ լճի մակերեսը 1450 քառ. քմ. էր, ապա 2000 թուականի տուեալներով հասել է 1290 քառ. քմ.ի: Միջին խորությունները 45 մետրից իջել է 27ի, լուսաթափանցիկությունները նոյն տարիները կտրուածքով 14,5 մ.ից նուազել է 2 մետրի: 4 անգամ նուազել է թթուածինի քանակությունները, մօտ 8 անգամ՝ Փոսֆորի, զիջելով ազոթի մակարդակի բարձրացմանը, որի հետեւանքով միաբնիլ շրմուճուները քանակությունները խորանարդ մետրում 0,4ից հասել է 7 կրամի:

Այս խոսուն տուեալները վկայում են, որ տարիները ընթացքում յստակ ծրագրային պետական մօտեցման բացակայությունեան հետեւանքով Սեւանայ լիճը յայտնուել է վատթարագոյն վիճակում: Ամէն պատեհ-անպատեհ առիթով անընդհատ խօսուել է այդ մասին, մինչդեռ որոշակի միջոցառումներ չեն ձեռնարկուել: Կառավարությունեան ընդունած եւ ոչ մի որոշում կեանքի չի կոչուել:

Ազգային Ժողովի մի քանի պատգամաւորները նախաձեռնությունեամբ խորհրդարանի քննարկմանը ներկայացուեց «Սեւանայ լճի պահպանությունեան մասին» օրէնքի մի նախագիծ, որը, որպէս այդպիսին, առաջինն է լճի պատմությունեան ընթացքում:

Նախագիծը սակայն որոշակի գործունէություն չի պահանջարկ ուղղությունեան չի սահմանում, այլ կատարել է ըստ նույնիսկ շատ աւելի կարեւոր գործառոյթ, սահմանում է պատասխանատու մարմինները, նրանց կատարած գործառոյթներին ըստ կարգի եւ ժամանակացոյցի: Յատկեցնում է լճի բնապահպանական համակարգի վերականգնման, պահպանությունեան, վերաբարակողությունեան, օգտագործման քաղաքականությունեան ծրագրային հիմունքները: Ըստ գրանց, կառավարություններին օրէնքի ընդունումից յետոյ երեք ամսուան ընթացքում մշակուած եւ խորհրդարանի հաստատման է ներկայացնում համալիր մի ծրագիր՝ խառքանչիւր տարուան համար առանձին ծրագրով: Ընդ որում համալիր ծրագիրը, որն ընդգրկուել է կատարելիք աշխատանքներին ըստ ժամանակացոյցի, Ազգային Ժողովը ընդունելու է որպէս օրէնք: Այսինքն ծրագիրը չի կարող կատարությունեան ընդունում որոշումները մակարդակի մնալ եւ փորձ է գործադրին առաւել սահմանափակ իրաւունքներ վերապահել չգործադրելու առումով:

Ծրագիրը ներառել է, ըստ նախագիծ, Սեւանայ լճի եւ նրան ջրով պահանջող աւազանի բուսական, կենդանական, ջրային պահպանութեան մասին տեղեկանքը, նախատեսուած աշխատանքները, դրանց իրականացման անհրաժեշտ յստակ ժամանակահատուածներով, աշխատանքների ֆինանսաւորման աղբիւրները, եղանակները: Նշուած է նաեւ, որ կառավարությունները պարտաւոր է լճում եւ նրա շրջակայքում գործունէությունեան ծաւալելու սկզբունքները, եղանակները եւ տեսակները եւս յստակեցնել, որոնք կարող են լճի աւազանում անօրինական գործունէություններ իրականացնող ծառայություններին ու տնտեսվարողներին սահմանափակման կամ ընդհանրապէս վերացման երաշխիք դառնալ:

Յատուկ ուշադրություն է դարձուած Սեւանայ լճից ջրթողումներին, որոնք այսօր լճի մակարդակի իջեցման հիմնական պատճառն են: Կառավարությունները իւրաքանչիւր տարի իւրաքանչիւր ամսուան կտրուածքով պէտք է ջրի բացթողման առաւելագոյն չափաքանակ սահմանէին: Հասկանալի է, որ եթէ օրէնքն ընդունուի, չափաքանակների ցանկացած փոփոխություն կարող է տեղի ունենայ միայն խորհրդարանի միջոցով, օրէնքում փոփոխություններ նախաձեռնելով, իսկ դա չի կարող հրապարակային լինի:

Ջրթողումների հետ միաթամանակ սահմանուելու է նաեւ ձկնորսությունեան առաւելագոյն չափաքանակը: Դրոյց, որի բացակայությունեան հետեւանքով գրեթէ 4 անգամ նուազել է ձկնների քանակը:

Օրէնքի առաւելությունները նաեւ այն է, որ Սեւանի փրկությունեան պատասխանատուությունեան դաշտ է բերուած երկրի գիտական կարողականությունները: Գիտությունները կ'Ազգային Ակադեմիայում ստեղծուած է «Սեւանի փրկությունեան փորձագիտական յանձնախումբ»՝ Ցանցումից, որը պէտք է կառավարությունեան ներկայացրած փաստաթղթերը եւ ծրագրերն անկախ մասնագիտական փորձաքննությունեան ենթարկի եւ իր եզրակացությունները տալ: Այս յանձնախումբի իրագործությունները բաւականին լայն են, որը նկատեցին պատգամաւորները, սակայն նչեցին, որ որոշակի գործառոյթների նշամբ չի նմանուած կառավարությունում ստեղծուող տարբեր, ոչինչ չանող յանձնախումբերին:

Օրէնքով սահմանուած են Սեւանայ լճի կենսոլորտային երեք գօտիներ, որոնց կառավարություններն անհատական մօտեցում պէտք է ցուցաբերի: Կենսոլորտային (Սեւանի ազգային զբօսայրի տարածք), անմիջական ազդեցությունեան գօտի (Ջրահալք աւազանը) եւ ոչ անմիջական ազդեցությունեան գօտի (միւսներից դուրս տարածքները, որոնք կարող են ազդել լճի կենսոլորտային վիճակի վրայ):

Կառավարությունները կողմ էր

# ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ


ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



## ՀԱԿԱՀԱՅ ԱՐՇԱԻ ԼՈՐԱԳՈՅՆ ԲԵՄԸ ՀԱՄԱՑԱՆՑԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՌՈՐ» ԿԱՅՔԸ

www.armenianterror.com հասցեով համացանցի թրքական կայքը թուրք մամուլին քաղաքաբար երեք լեզուներով (անգլերեն, գերմաներեն և թրքերեն) կը ներկայացնէ յուրեր և ուսումնասիրութիւններ Հայկական Հարցին և հայերու գործած «ոճիրներուն» մասին, տեղ - տեղ յաւանելով, թէ քննարկումները կատարուած են «հիմնուելով արխիւներու վրայ»: Անշուշտ ընթացողին կը մնայ կուսակցի, թէ ի՞նչ արխիւներու մասին է ակնարկութիւնը: Կայքը կը կազմակերպէ նաեւ հակահայ նամակարձաններ և հարցախոյզեր:

Կայքին յղուածներու և ուսումնասիրութիւններու յատկացուած բաժինի «Հայկական Հարց» գլուխին



տակ կ'արժարձուին հետեւեալ նիւթերը.

- ◆ Սան Սթեֆանոյի դաշնագիրը և Պերլինի վեհաժողովը.
- ◆ Հայերու «ըմբռստութիւնները».
- ◆ Ա. Աշխարհամարտը և անկէ ետք: Այստեղ կը կարդանք. «Անտք» [հայեր] ո՛չ միայն թուրքեր ջարդեցին, այլև Հաբարի շրջանին մէջ յոյներ և հրեաներ» կոտորեցին.
- ◆ Սեբեր և Լոզանի դաշնագիրները.
- ◆ Հայերը Օսմանեան կայսրութեան մէջ.
- «Հայկական ռեյլինգ» գլուխը շինուած և առասպելախառն նիւթերով բաժին մըն է, որ կ'ընդգրկէ հետեւեալ «վերլուծականները».
- ◆ Կովկասի և Անատոլիոյ մէջ թուրք գոհները.
- ◆ Կարսի, Վանի, Էրզրումի, Իգտրիի և այլ շրջաններու մէջ հայերու կողմէ ջարդուած թուրքերու հաւաքական գերեզմաններու թղթածրարները.
- ◆ Հայաստանը և անարեւելութիւնը.
- ◆ Հայկական հեղեղեցի և անարեւելութիւնը.
- ◆ ՔԱԿ - Հայաստան գործակցութիւն.
- ◆ Արխիւներու վրայ հիմնուած գրութիւն մը՝ Կովկասի և Անատոլիոյ մէջ հայերու կատարած ջարդերուն մասին.
- ◆ Կրօնական «հանդուրժողութիւնը» թուրքերի մէջ.
- ◆ Ազգայնական - Հայաստան պատերազմին, 1992ին, տեղի ունեցած «ջարդ»երը.
- ◆ Գիրքեր՝ Հայկական Հարցին մասին:
- Կայքին մէջ արժարձուած նիւթերուն խորագիրները արդէն բաւարար պատկերացում մը կու տան թուրքերի հակահայ քարոզչութեան մեթոդային «զէնք»երուն և անոնց օգտագործման ձևերուն մասին: Հակահայ յայտարարութեան, որ կայքին նիւթերուն մէջ յատկօրէն կ'երեւին լեզուի թէ տրամաբանութեան կանոնաւոր թուրքութիւններ, պատմական խոցելի տուեալներ և անհիմն տեսակէտներ, այսուհանդերձ կարելի չէ անհկատ թողուլ համացանցին միջոցով հակահայ պայքար մղելու թրքական առաջին տարտած քայլերը: Ի վերջոյ, քանի մը ամսուան մէջ արձանագրուած յառաջիկայը եթէ պատշաճօրէն չհակադարձուի, թրքական հակաքարոզչութիւնը կրնայ հետզհետէ ինքզինք հաստատել և վտանգ սպառնալ մինչ այդ հայերու տարած մեծ աշխատանքին:

**ԾԱՂԿԱԶԱՐԴԸ**  
ԺՈՒՆԻԷԻ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ  
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵԶ

Անթիլիասի, Չալքայի, Ժունիէի և շրջակայից Ս. Յարութիւն եկեղեցւոյ թաղականութիւնը կու գայ յայտարարելու, թէ Մեր Փրկչին Յիսուսի Բրիտանիա հրաշափառ Երուսաղէմ մուտքին և Ծաղկապարի տուններուն առիթով՝ Ժունիէի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ պիտի մատուցուի Ս. և Աննա պատարագ:

Պիտի պատարագէ և քարոզի՝  
**ՅՈՒՆԻ. Տ. ՓԱՌԵՆ ՎՐԴ. ՎԱՐԴԱՆԵԱՆ**

Սկիզբ ժամերգութեան՝	Ժամը 8:00ին
Ս. պատարագ՝	Ժամը 9:30ին
Մանուկներու թափօր՝	Ժամը 11:30ին
Կէսօրէ ետք դոնրացիք՝	Ժամը 4:00ին

Սիրով կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու հոգեպարար արարողութիւններուն հաղորդուելու համար օրուան խորհուրդով:

ԹԱՂԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
ԶԱԼՔԱՅԻ, ԱՆԹԻԼԻԱՍԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՅ

## «ՀԱՔԸՐ»ՆԵՐՈՒ ՀԵՏՔԵՐՈՎ...

Մարտին Էֆ. Պի. Այ. ի պատասխանատուներ յայտնեցին, թէ Ռուսիոյ և Ռեքրանիոյ մէջ կազմակերպուած ոճիրի խմբաւորումներու կողմէ աջօրինի ձեռով համակարգիչները տեղեկութիւններ գողնալու («հաքիմ»-ի) ղեկավարը պատճառ դարձած են մէկ միլիոն քրէտի քարտերու թիւերու գողութեան: Պատասխանատուները կոչ ուղղեցին ընկերութիւններու և հաստատութիւններու, որպէսզի մնա գողութիւններու առաջը անոնց միջոցառումներու դիմին:

Ըստ Էֆ. Պի. Այ. ի, Արեւելեան Եւրոպական խմբաւորումներ համակարգչային ծածկագիրներ բացայայտող յատուկ ծրագիրներով հաստատութիւններու համակարգիչներէն տեղեկութիւններ գողնալէ ետք անոնց մէկ կողմէ են մեծ գումարներ, հակառակ պարագային սպառնալով բացայայտուած տեղեկութիւնները շահագործել: Կարգ մը պարագաներու, ընկերութիւններու համակարգչային դրոշմներէն քրէտի քարտերու թիւեր ծախուած են մաֆիային:

«ՀԱՔԸՐ»Ի ՄԵՏԱԳՈՅՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ԲԱՅԱՅԱՅՏՈՒՄԸ



Ապրահամ Ապտալլա

Մարտի վերջերը Նիւ Եորքի ոստիկանութիւնը յայտարարեց, թէ Փետրուարին ձերբակալուած է «հաքիմ»ի գործողութիւններէն ցարդ մեծազոյնի Ետիմ Գոնուոյ «ուղեղը»: Նիւ Եորքի բնակիչներէն պաշտօնատիր ծագումով 31ամեայ Ապրահամ Ապտալլան, որ օգտագործելով «Պրոքլիմ» Հայթի համարային գրադարանին համակարգիչներէն մէկը՝ յաջողած է անձնական տեղեկութիւններ հաւաքել Միացեալ Նահանգներու մեծահարուստներէն 217ին մասին: Ապտալլա մեծահարուստներին ձերբակալուած է «հաքիմ»ի գործողութիւններէն ցարդ մեծազոյնի Ետիմ Գոնուոյ «ուղեղը»: Նիւ Եորքի բնակիչներէն պաշտօնատիր ծագումով 31ամեայ Ապրահամ Ապտալլան, որ օգտագործելով «Պրոքլիմ» Հայթի համարային գրադարանին համակարգիչներէն մէկը՝ յաջողած է անձնական տեղեկութիւններ հաւաքել Միացեալ Նահանգներու մեծահարուստներէն 217ին մասին: Ապտալլա մեծահարուստներին ձերբակալուած է «հաքիմ»ի գործողութիւններէն ցարդ մեծազոյնի Ետիմ Գոնուոյ «ուղեղը»:

Սեպտեմբեր 2000ին «Ուեսթըրն Եուրոպ» օրուան մը համար փակեց համացանցի իր կայքը, երբ բացայայտուեցաւ, թէ «հաքիմ»-ներ գողցած են ընկերութեան յաճախողներէն տանհիմն հազար հոգիի քրէտի քարտերուն թիւերը:

Դեկտեմբեր 2000ին ռուս «հաքիմ»-ը յաջողեցաւ «քակել» օգտ. credit-

**ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ**  
ԶԱԼՔԱ, Հեռ. 04/710735-6-7

Ծաղկապարի առիթով՝ Չալքայի Ս. պատարագ պիտի մատուցուի և աւուր պատշաճի քարոզի՝

**ԱՐՄ. ՅՈՒՆԻԱՆԵՍ ԵՄՍ. ԹԵՅՐՈՒՋԵԱՆ**  
Օգնական եպիսկոպոս Լիբանանի պատրիարքական թեմին

Կիրակի, 8 Ապրիլ 2001 առաւօտեան ժամը 10:30ին: Յաւարտ Ս. պատարագի, տեղի պիտի ունենայ Ուոթրինգ, Թափօր և Անդաստան:

Շրջանի բոլոր հաւատացեալները հրաւիրուած են մասնակցելու սոյն հոգեպարար արարողութեան:

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԻԲԱՆԱՆԻ ՇՐՋ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**  
**ԳՐԱԿԱՆ - ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԸ**

**L. ՇԱՆԹԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵՐԵԿՈՅ**  
(Մահուան 50ամեակ)  
Խօսք կ'առնեն՝  
Հայրենի մտաւորական՝  
**ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ՔԵՆՏԵՐԵԱՆ**  
ԵՒ  
**ԳՐԻԳՈՐ ՇԱՀԻՆԵԱՆ**  
•(ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ)

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 11 Ապրիլ 2001, երեկոյեան ժամը 8:30ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ:

**ԱՐՄԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԼՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

## ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ԼՈՒՍԱՆԿԱՐՈՂ ԵՒ ՎԻՏԷՐ ՆԿԱՐՈՂ ՍԱՐՔ ՄԸ


Վերջին փարիսերուն բուսանային («տիմիթր») արհեստագիտութիւնը յեղաշրջած է լուսանկարչական և վիտէ անարահանումի սարքերուն ճարտարաբանութիւնը: Այսօր նշեալ երկու սարքերուն միջոցի փարիսերութիւնը աւելի ևս նուազած է շնորհիւ «Քանոն» ընկերութեան «Powershot S300 digital ELPH» լուսանկարչական քամերային, որ փոքրագոյնն է իր փակակն մէջ և, լուսանկարչութեան կողմէն, առիթ կ'ընձեռն անել վիտէ անարահանումի:

Այս սարքով կարարուած պարկերահանումը կարելի է դիպել նոյնիման սարքին պատասխան վրայ, նաեւ պարկերահանումի կամ համակարգիչի պատասխաններու վրայ: Աւելի և, լուսանկարչական մեքենան օժտուած է փոքրակն սարքով մը, որ «300 dpi» խորութեամբ նկարներ կը փայլ: Մարքը ունի նաեւ պարկերները 3 անգամ փոքրացնելու կամ մեծցնելու կարելիութիւն (35 միլիմետր - 105 միլիմետր):

«Քանոն»-ի այս արտադրութիւնը ցուցադրուեցաւ «CeBit» արհեստագիտական ցուցահանդէս - փոստամատին, որ փեղի ունեցաւ Մարտի վերջերը Հանովրի մէջ:

## ԵԼԵԿՏՐՈՆԻԷ ԲԱՐՏԵՐՈՒ (E-CARDS) ՀԱՄԱՑԱՆՑԻ ԿԱՅՔԸՐ

www.123greeting.com  
Ե-քարտերու (e-cards) յատուկ այս կայքը կ'ընդգրկէ հազարավոր քարտեր և կը յատկանշուի թեմաներու այլազանութեամբ: Տարեդարձներու և յատուկ տօներու քարտերու կողմէն, այստեղ կարելի է գտնել նաեւ արուեստի, գործատեղիի, ընտանեկան պարագաներու, բարեկամներու, պսակի, մարզական, պատանեկան, խաղալիքներու, երաժշտութեան և շարք մը այլ թեմաներով քարտերու հաւաքածոներ:



www.disney.com/dcards  
Աշխարհահռչակ «Տիլվի» ընկերութեան պաշտօնական կայքին մէջ (www.disney.com) յատուկ բաժին մը տրամադրուած է այլազան թեմաներով շնորհակալական քարտերու, որոնք մեծ մասամբ կը ներկայացնեն «Տիլվի»-ի արտադրած շարժուն գծանկարներու հերոսներուն պատկերներով:

www.playground.kodak.com  
Վերջին շաբաթ հասցնելու կը փոխադրէ «Գոտար» ընկերութեան ե-քարտերու բաժինը:

www.expressit.com  
Այս կայքի քարտեր կը յատկանշուին իրենց երեք ուղղութեամբ (3D) նկարներով:

www.artistsfriend.com  
Այս կայքին լուսանկարչական և գեղանկարչական ստեղծագործութիւններու պատկերներով ներկայացող քարտերուն մեծ մասը կը յատկանշուի իր իւրաքանչեւ թեմամբ և հմայքով:

Նոյնքան ճոխ բաժիններով կը ներկայանան նաեւ հետեւեալ կայքերը՝  
www.bannergreetings.com  
www.bluemountain.com  
www.all-yours.net  
www.regards.com  
www.ohmygoodness.com  
www.1-greeting-cards.com

Պատրաստեց՝ Խ. ՍՈՒՐԱՏԵԱՆ

# Մանկապատանեկան

## ՁԵՆՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏԱԼԵ

### ԶԱՏԿՈՒՄՆ ԴԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

#### 1) Զատիկի բացիկներ



**Պետք ունիս.** Հաստ խաւաքարտի, բարակ մետաղէ թելի, ջրաներկի, վրձինի, խէժի, մկրատի,

ր. - Ուրիշ խաւաքարտի կտորի մը վրայ գծէ ընտրած պատկերները (արեւ, ծաղիկ...): գանոնք կտրէ եւ վրան ճերմակ ներկ քսէ:

գ. - Բացիկը ներկէ ընտ-

նաեւ պզտիկ կարած ձեւերը: Ձգէ, որ չորանան:

դ. - Մետաղէ թելերը (ծաղիկներուն կոթերուն համար) կտրէ եւ ընտրած գոյնովը ներկէ:



գծաքաշի, մատիտի: ա. - խաւաքարտին վրայ գծէ եւ կտրէ 11 x 16 սմ. քառակուսիներ: Անոնց վրայ քսէ ճերմակ ներկի խաւ մը: Ձգէ, որ չորանան: Եթէ պէտք զգաս, երկրորդ խաւ մըն ալ քսէ:

րած գոյնովը, ըստ ընտրած նիւթի (ծաղիկներուն պարագային խորքը կըրնաս կապոյտ ընել): Կրնաս նաեւ ուրիշ գոյնով շրջանակ մը գծել: Աւելցուր մանրամասնութիւնները (խոտ, կէտեր...): Ներկէ

ե. - Թելերուն ծայրերը խէժ դիր եւ գանոնք ծաղիկներուն փակցուր: Թելին միւս ծայրին վրայ ալ խէժ դիր եւ գայն ընելով վրայ փակցուր: Կրնաս թելերը քիչ մը ձուլել: Ձգէ, որ չորանան:

### ՊՏՈՅՏ ՄԸ ԶՈՒԿԵՐՈՒՄ ԶԵՏ (Բ. ՄԱՍ)

#### ՄԱՐՄԱԿԱԶՍՈՒԹԻՒՆ

1) Ակունքով օժտուած բերանը կը բռնէ ուտելիքը: 2) Քթածակերը կը զգան հոտերը: Սակայն անոնք չեն կապուած բերանի խորշին հետ, ինչպէս մարդուն պարագային է:

3) Կողմերը գետնիցէ զինքէն աւելի կրնան կռնել:



տեսնել ըրոր ուղղութիւններով:

- 4) Թեփերը գիրար կը ծածկեն, ինչպէս՝ տանիքին կողմնորոշման:
- 5) Կունակին լողակը կարելիութիւնը կու տայ ձուկին իր ուղղութիւնը պահելու, երբ ան պոչը կը շարժէ:
- 6) խոռիկները ծածկուած են բարակ ճեղքով մը օժտուած մաշկով մը: Մաշկին շարժումներուն շնորհիւ ջուրը կը շրջի եւ ձուկը կը շնչէ:
- 7) Մարմնին տակը գոյնութիւն ունին երկու կողմից լողակներ...
- 8) ... Եւ 1 լողակ:
- 9) Պոչը, կամ պոչի լողակը կը ծառայէ ձուկին յաւաքանայուն:

**ԱՆՈՒՔ ԻՆՉՊԵՍ ԿԸ ԶԵՏԵՆ**  
Ձուրը կը պարունակէ օդէն եւ ջրային բոյսերու շնչառութեան յառաջացած թթուածին: Այս թթուածինը գործածելու եւ շնչելու համար ձուկերը թոքեր չունին, այլ՝ չորս գոյգ խոռիկ: Անոնք արիւնով լեցուն թերթիկներ են: Ձուկը թթուածինով հարուստ ջուրը բերանին մէջ կ'առնէ: Ձուրը կ'անցնի խոռիկներուն մէջէն եւ ճեղքէն դարձեալ գուրս կ'ելլէ: Այդ ընթացքին խոռիկները կ'առնեն ջուրին մէջ եղած թթուածինը:

**ԱՆՈՒՔ ԻՆՉՊԵՍ ԿԸ ԾՓԱՆ**  
Ձուկերը ունին օդով լեցուն «տոպրակ» մը: Պակսեցնելով կամ աւելցնելով այդ տոպրակին մէջի օդը՝ ձուկերը կարելիութիւն կ'ունենան իրենց ուզած խորութեան լողալու:

**ՉՇՓՈՒՆԵՐ**  
Կենդանաբանները ձուկերը 2 խումբի կը բաժնեն: Կռնիկով ձուկերը, ինչպէս՝ շանաձուկը եւ կատուաձուկը, որոնք կռնիկով կազմուած ճկուն կմախք մը ունին: Անոնք ունին հինգ գոյգ խոռիկներ ճեղքեր եւ հաստ լողակներ, սակայն թեփ չունին:

Ոսկրոտ ձուկերը փուշերով կազմուած կմախք մը ունին: Անոնց լողակները ծալուելու կարողութիւնը ունին: Այս ձուկերը օտուած են երկու ճեղքերով, որոնք կը ծածկեն խոռիկները: Անոնց թեփերը ոսկրային շերտեր են:

#### ՉԿՆՈՐՍՈՒԹԻՒՆ

Ծովը անսպառ ամբար մը չէ: Ձկնորսները միշտ աւելի մեծ քանակութեամբ ձուկ կ'որսան: Արդիւնք ունեցողները միշտ աւելի նուազ կը լեցուին. ձուկերը կրնուազին, որովհետեւ ձկնորսութիւնը կը գերազանց գործուի: Ձկնորսներուն որսերուն քանակին հոլովոյթի հետեւող քնագէտները անգամաւ կը հնչեցնեն:




Միջերկրականի ափերուն ձկնորսները «ձամբայ» կ'ելլեն, երբ տակաւին մուր է եւ ցաւահանգիստ կը վերադառնան կտօրէ ետք:

**ԳԻՏԻՒՐ. ԹԵ...**  
Շանաձուկի լողակները շատ սիրուած են Ասիոյ կարգ մը երկիրներուն մէջ: Անոնք ձկնորսներէն կը գնուին քիչովը մը մօտաւորապէս 40 տոյարի եւ կը ծախուին 10 անգամ աւելի սուր: Բռնուած շանաձուկերուն միայն լողակները կը կտորուին, մնացածը ծովի նետուի: Այս վայրագութիւնը եւ վատնումը վտանգի կ'ենթարկեն այս ձուկերը, որովհետեւ շանաձուկի սերնդագործութիւնը բաւական ուշ կը սկսի, առաջին անգամ՝ 6 - 18 ամեակին միջեւ. անոնք ամէն տարի միայն քանի մը ձագ կ'ունենան...


### Ժ Ա Մ Ա Ն Ց



Կրճա՞ս գտնել 2 պատկերներուն միջեւ գոյութիւն ունեցող 8 տարբերութիւնները:



Կրճա՞ս օգնել վերի գիծուորին իր շնիկը գտնելու համար: Սակայն ան ձամբուր վրայ պետք է հետը առնէ ցաւը իր միւս երկու ընկերները:



Գտիր պատկերներուն ձիշո շարքը՝ հասկնալու համար պատահածը:

### Պատրաստե՛ք ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

«ԹԻՉՆՈՑ ԲՈՅՆ»      «ԹԻՉՆՈՑ ԲՈՅՆ»

### ԾԱՂԿԱԶԱՐԴԸ «ԹՈՂՆՈՑ ԲՈՅՆ»Ի ՄԷՋ

Մեր Փրկչին Յիսուս Քրիստոսի հրաշափառ Երուսաղէմ մուտքին եւ Ծաղկապարտի տօներուն առիթով, յառաջիկայ Կիրակի, 8 Ապրիլ 2001ին, «Թոչնոց Բոյն»ի Ս. Գալիլայէ եկեղեցւոյ մէջ պիտի մատուցուի Ս. եւ անմահ պատարագ: Կը հրաւիրենք «Թոչնոց Բոյն»ի բոլոր բարեբախտները, բարեկամները, ծնողները եւ հաւատացեալները ներկայ գտնուելու Ս. պատարագին եւ հաղորդուելու օրուան խորհուրդով:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ


#### 2) Տան գարդարանքներ

**Պետք ունիս.** Փոլիէստիլէնի թագի մը կաւ թերթիկներ, ջրաներկի, քրեփոն թուղթի, պարպուած հաւկիթի կեղեկներուն, վրձիններուն, մկրատի, գծաքաշի, խէժի:

ա. - Եթէ փոլիէստիլէնի թագ մը ունիս, կրնաս գայն ուզած գոյններովը ներկել: Այլապէս կրնաս թերթի ճմռթկել եւ ծայրերը իրարու փակցնելով կտոր շրջանակ մը շինել. ապա քրեփոն թուղթով երկայնք կտրէ եւ թուղթէ շրջանակը ամբողջովին ծածկէ այդ երկայնքով: Ջրաներկով ներկէ նաեւ հաւկիթները:

բ. - Երկու տարբեր գոյններով 2,5 սմ. քրեփոն թուղթով երկայնք կտրէ: Մէկ երկու փաթեթ թագին շուրջ: Երկու ծայրերը խէժով փակցուր: Երկրորդ երկայնք ալ փաթեթ թագին շուրջ հակառակ ուղղութեամբ, ինչպէս նշուած է նկարին մէջ:

գ. - Վերջին թուղթով է ժապաւեններ պատրաստէ



եւ գանոնք փակցուր թագին վրայ:

գարդարել պզտիկ ճուղիկներով եւ գարդարուած հաւկիթներով:

#### 3) Նապաստակ - կողովներ


**Պետք ունիս.** Պահածոյի պարապ տուփերու, սրճագոյն քրեփոն թուղթի, ճերմակ, սեւ եւ սրճագոյն թուղթի, ներկեր, խէժ, մկրատ:

ա. - Պահածոյի պարապ մաքուր տուփի մը վրայ փակցուր սրճագոյն քրեփոն թուղթը:

բ. - Սրճագոյն թուղթին վրայ գծէ եւ կտրէ նապաստակին երկու ականջները եւ ոտքերը: Ձանոնք փակցուր մարմնին վրայ:

գ. - Ճերմակ թուղթին վրայ գծէ եւ կտրէ նապաստակին ղէմքը եւ ականջին մէջի բաժինները: Ձանոնք փակցուր մարմնին վրայ:



դ. - Ներկելով գծէ նապաստակին ղէմքին մանրամասնութիւնները: Սեւ



թուղթին վրայ գծէ եւ կտրէ պետքը: Ձանոնք փակցուր նապաստակին երեսին վրայ: Սրճագոյն քրեփոն թուղթի կտոր մը ճմռթկէ եւ գայն պոչին տեղը փակցուր: Այս նապաստակ - կողովը կրնաս լեցնել տուր մէջ հաւկիթներով:



# ՄԱՐԶԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ



## ՆԱՄԱԿԱՆԻ ՄԻՆՉԵՒ ԵՐՔ...

Ես այ բախտը ունեցայ ներկայ գտնուելու Կիրակի օրուան Հ.Մ.Ը.Մ. - Ռասիսկ ֆուտբոլի մրցումին, Սաֆայի դաշտին վրայ...

Մթնոլորտը ծանր էր, պատկերը ահաւոր: Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի ներկայացուցչական կազմը անգամ մը եւս չէր յաղթած, ու նոյնիսկ կէտ մըն ալ չէր կարողացած խլել մրցակիցէն...: Արդի՜նք, երկրորդ դասակարգ փոխադրուելու վտանգը այլեւ դարձած էր իրականութիւն... Լիբանանի ֆուտբոլը ոսկիէ տառերով դրոշմած մեր կազմը ոչ միայն կորսնցուցած էր իր երբեմնի փառքը, այլեւ կը կորսնցնէր այն վերջին պարծանքը, որն էր. «Քնաւ Բ. դասակարգ չփոխադրուած միակ խումբը...»:

Երկուշաբթի է. կը կարգաւ թերթերը: Հ.Մ.Ը.Մ.ի անունը գրուած է դասաւորման վերջին դիրքին վրայ: Փոքր հաշիւ մը, ու արդէն դիրքին է եզրակացուել, թէ միայն բախտը կրնայ փրկել խումբը:

Երեք շաբաթներ անգամ են այդ օրէն, երբ լսեցի բարձրատիճան հ.Մ.Ը.Մ.ականէ մը, թէ մեր խումբը վատահարք պիտի մնայ Ա. դասակարգ. վատահեղով Աստուծոյ եւ մարմնկներուն ոտքերուն:

Ո՛ր մարմնկներուն ակնարկելով կ'ըսէր ան այդ խօսքը: Վատահարք ոչ այն 22ին, որոնք նարնջագոյն տարայ մը հագած, ներկայացած էին դաշտ: Հ.Մ.Ը.Մ.ի մարմնկները չէին անոնք, այլ հասարակած խումբ մը տղաք, որոնք «կը վրադէին» Կիրակի կէսօրէ ետք մը ֆուտբոլ խաղալով:

Երթալով քիչ մը աւելի հեռու, պիտի շեշտեմ, թէ Հ.Մ.Ը.Մ. Կիրակի օր չէր պարպել խիստ վտանգի տակ գտնուող խումբի մը պատկերը: Խաղացողները չէին գիտակցեր, որ այդ մրցումը Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան ամենէն ճակատագրական խաղն էր, չէին գիտակցեր, որ իրենք Հ.Մ.Ը.Մ.ի ճակատագիրն է, որ կ'որոշէն այդ խաղով, աւելի՜ն, անոնք նոյնիսկ ԱՆՏԱՐԲԵՐ էին. Կիրակի չկար «գնուած խաղ», չկար իրաւարարի կողմնակցութիւն, չկային պատմուած մարմնկներ, չկար յոգնութիւն: Կար միայն Ռասիսկը, որ գտնմարդկային ճիգ կը թափէր յաղթական աւարտելու այս մրցումը, եւ անոնք իրենց նպատակին հասան, իրենց ետին ձգելով գետին նստած «ֆուտբոլ խաղացողները» եւ ոչ - մարմնկներ, որոնք տխրած էին իրենց պարտութենէն, ինչպէս նաեւ 3000է աւելի համակիրներ, որոնք չէին ուզեր դուրս գալ դաշտէն, մերժելով պատահածը... չիմա այլեւ ուշ է վերլուծումներ կատարելու համար: Յետակ կայ մէկբան. Հ.Մ.Ը.Մ. պիտի փոխադրուի Բ. դասակարգ, եթէ գերմարդկային եւ արտասովոր ճիգերը խնայուին:

Հ.Մ.Ը.Մ.ի 7,000 համակիրները պիտի ընդունէին այս դառն իրականութիւնը, եթէ խումբը ըրած ըլլար իր կարելին: Պիտի ընդունէին տկար խումբ մը, որ մինչեւ մրցումին աստիք պայքարելու կամք ունի: Համակիրները կ'ընդունին տկար խումբ, բայց չեն ընդունիր թոյլ կեցուածք մրցումներու ժամանակ:

Ախոյեանութիւնը տակաւին չէ ասարած: Մնացած են տակաւին երկու խաղեր, եւ ամէն բան չէ կորսուած: Հ.Մ.Ը.Մ., ճիշդ է, որ կրնայ կորսնցնել իր Ա. դասակարգի փառքը, սակայն կրնայ հաշտուիլ իր հիւանայի համակիրներուն հետ. միասնաբար յաղթահարելու համար դժուարութիւնները, թէկուզ յառաջիկայ տարեշրջանին: Պէտք է պայքարինք ամէն ձեւով ու Հ.Մ.Ը.Մ.ականի վայել ոգիով. ապահովելու համար առաւելագոյն 6 կէտերը, վերջին երկու մրցումներէն:

Ժամանակը յարմար է վերագտնելու Հ.Մ.Ը.Մ.ականի վայել ոգին: Ժամանակն է մէկ կողմ թողելու ամէն ներքին հարց ու միացնելու ճակատները: Ժամանակը յարմար է հազուելու Հ.Մ.Ը.Մ.ի նարնջագոյնը, պէտք է պայքարիլ:

ԱՐՄԵՆ ԱՐԵՒԵԱՆ

## Հ.Մ.Ը.Մ. - ԼԵՎԱՍ

### ՊԱՍԲԵԹՊՈԼԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Շարաթաւերը լ. եւ Սոֆիա Յակոբեան քոլեճի դաշտին վրայ, տեղի կ'ունենան Հ.Մ.Ը.Մ.ի ԼԵՎԱՍի պասբեթպոլի մրցումները հետեւեալ յայտագրերին հիմամբ.

ՀԱՐԱՐՈՒ 7 ԱՊՐԻԼ

ԺԱՄ

12:30	Յակոբեան - ճեմարան (Միջակ աղջիկներ)
1:15	Ս. Խանձմիրեան - Յառաջ (Մեծ տղաք)
2:15	Յառաջ - Մեքոնյան (Մեծ աղջիկներ)
3:15	Շալ Աւետ. (Ս.Յանյան) - ճեմարան (Միջակ տղաք)

4:00	Յ. Մանուկեան - Ս. Խանձմիրեան (Միջակ տղաք)
5:00	Մեքոնյան - Թորոսեան (Միջակ աղջիկներ)

ԿԵՐԱԿԻ 8 ԱՊՐԻԼ

1:30	Յ. Մ. Յակոբեան - ճեմարան (Մեծ տղաք)
2:30	Մեքոնյան - Թորոսեան (Միջակ տղաք)
3:30	Մեքոնյան - Շամբեան - Թարթիկեան (Մեծ տղաք)
4:30	Ս. Ե. Յ. Յակոբեան - Արհեստից (Մեծ աղջիկներ)
5:30	Ս. Ղ. Ղ. Յակոբեան - Գ. Հարպոյեան (Միջակ տղաք)
6:30	Ս. Ղ. Ղ. Յակոբեան - Յովակիմեան (Մեծ տղաք)

## ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹԳՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ՎԱՂԸ՝ Է. Մ. Մ. - Է. Մ. Ը. Մ. ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՄՐՅՈՒՄ

Լիբանանի ֆուտբոլի ախոյեանութեան 21րդ եւ նախաձեռնող շահագրուանի մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական խումբը վաղը՝ Կիրակի Պէյրոթի ֆաղաբապետարանի դաշտին վրայ ճակատագրական մրցում մը ունի կատարելիք Հ.Մ.Ս.ի դէմ: Ճակատագրական այն իմաստով, որ Հ.Մ.Ը.Մ. յաղթանակէ այլընտրանք չունի, որովհետեւ պարտութեան մը պարագային անիկա իր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով պիտի փոխադրուի Բ. դասակարգ, ինչ որ անչուտ երբեք հաշտ աչքով պիտի չզիտուի Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներուն կողմէ: Մրցումը տեղի պիտի ունենայ ժամը 4:30ին:

Պարագլուխի դիրքը գրաւող Թատամոն Սուր, որ պիտի ճակատի Ռասիսկի դէմ, հաւասարութեան մը միայն պէտք ունի իր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով Լիբանանի ախոյեան ճանդիսանալու համար:

Ստորեւ՝ 21րդ եւ 22րդ շահագրուանի մրցումներուն յայտագիրը (նշենք, թէ վերջին շահագրուանի մրցումներուն թուականը եւ դաշտերուն վարերը, Լիբանանի ֆուտբոլի ֆեդերատիոնը պիտի ճշդէ շարաթաւերը իր գուժարած ժողովին):

21ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ (ԱՅՍՕՐ)

Սաթես - Շապապ Սահէլ	4:30ին Սաֆա
Ալսա Ահլի Ալէյ - Անսար (ՎԱՂԸ)	7:00ին Պէյրոթ
Հ.Մ.Ս. - Հ.Մ.Ը.Մ.	4:30ին Պէյրոթ
Թատամոն Սուր - Ռասիսկ	4:30ին Պէյրոթ
Սաֆա - Ահլի Սայտա	4:30ին Սաֆա
Սալամ - Նրժմէ	4:30ին Թրիփոլի

ԺԱՄ ԴԱՇՏ

4:30ին Սաֆա
7:00ին Պէյրոթ
4:30ին Պէյրոթ
4:30ին Պէյրոթ
4:30ին Սաֆա
4:30ին Թրիփոլի

22ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

Ռասիսկ - Սաթես	ԿԵՏ
Անսար - Սալամ	48 (52-15)
Ահլի Սայտա - Հ.Մ.Ը.Մ.	42 (43-20)
Շապապ Սահէլ - Ալսա Ահլի Ալէյ	40 (41-23)
Հ.Մ.Ս. - Թատամոն Սուր	40 (42-25)
Նրժմէ - Սաֆա	33 (38-27)
21րդ շահագրուանի մրցումներուն նախօրեակին ընդհանուր զատարուած կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.	30 (32-28)
	26 (25-31)
	19 (23-41)
	15 (25-38)
	15 (19-38)
	12 (16-44)
	11 (21-47)

- 1.- Թատամոն Սուր
- 2.- Նրժմէ
- 3.- Ահա Ահլի Ալէյ
- 4.- Սաթես
- 5.- Անսար
- 6.- Սալամ
- 7.- Սաֆա
- 8.- Շապապ Սահէլ
- 9.- Հ.Մ.Ս.
- 10.- Ռասիսկ
- 11.- Ահլի Սայտա
- 12.- Հ.Մ.Ը.Մ.

●ԼԻԲԱՆԱՆԻ ֆուտբոլի Դ. դասակարգի ախոյեանութեան 5րդ շահագրուանին իր կատարած մրցումին, երէկ Հ.Մ.Ը.Մ. Պ. Համոն արձանագրեց իր առաջին յաղթանակը, 5-1 արդիւնքով պարտութեան մատնելով Նըսուր Ալէյը: Սեւակ Գալֆայեան, Ճորճի Ալճեան (2 կոլ) եւ Մկօ Օտապաշեան (2 կոլ) նշանակեցին Հ.Մ.Ը.Մ. Պ. Հ.ի կողմը: Պ. Հ.նէք, թէ անցելով շարաթաւերին Հ.Մ.Ը.Մ. Պ. Հ. կրեց իր առաջին պարտութիւնը՝ Նրժմէ Սահրայէն, 2-0 արդիւնքով:

## Ս. ԷՍ. ՌՈՍԱ - ՓԱՐՄԱ ՏԱՔ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Իտալիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Քալչիո) 25րդ հանգրուանի վերջին մրցումը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի օր, ուր Ֆիորենտինա (10րդ) պիտի հիւրընկալէ պարագլուխի դիրքը գրաւող Ս. Էս. Ռոման:

Իտալիոյ ֆուտբոլի ֆեդերատիոնին կարգադրութեամբ այս մրցումը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի օր (4րդ): Թէեւ երկու կազմերը իրարու մօտ են, սակայն Լացիո (3րդ) վեց կէտի առաւելութիւն ունի այսօրուան իր մրցակիցին վրայ:

Անցեալ եղանակի ախոյեան Լացիո Ռոմա մտաւայման յաղթանակի պէտքուն պարագրուիսի դիրքը գրաւող Ս. Էս. Ռոմանի հետ իր պայքարը շարունակելու համար, թէեւ անիկա 12 կէտով ետ կը մնայ Ս. Էս. Ռոմայէն: Հակառակ անոր, որ Լացիոյն պիտի բացաւային չիլիցի յառաջապահ Մարսելիօ Սալաս (Վիրատը), սակայն այդ մէկը այդքան ալ մտահոգիչ բան մը պիտի չըլլայ մարզիչ Տիւօ Չոֆի համար, նկատի ունենալով որ Փարմայի մարզիչ Ռենչօ Ուլիվէրա ունի աւելի բացականեր: Անոր կազմին պիտի բացակային Մարիա Ալմէյտա, Նեսթոր Սենսիսի, Տիեկօ Յուպեր (Վիրատը) եւ պրպիցիցի Մարիօ Ամորոպօ (կախակայտուած):

Վերջին 14 հանդիպումներուն ընթացքին Լացիո միայն երկու անգամ պարտուած է Փարմայէն: Վերոնշեալ ճակատումը այսօրուան յայտագրերին վրայ պիտի ըլլայ միակը, որովհետեւ մնացեալ եօթը

կատարած վերջին տասը մրցումներուն յաղթանակ չէ արձանագրած, մինչ Ս. Էս. Ռոմա իր կատարած վերջին ինը մրցումներուն արձանագրած է ութը յաղթանակ մէկ հաւասարութիւն:

Այս մրցումը կարիքի Պարիսի Պարիսի համար պիտի ըլլայ յիշատակելի, որովհետեւ ան անցեալ ամառ Ս. Էս. Ռոմա իր փոխանցումէն ետք առաջին անգամ ըլլալով դաշտ պիտի ներկայանայ իր նախկին ակումբին Ֆիորենտինայի դաշտին վրայ:

2րդ դիրքը գրաւող Եուվենթուս, որ վերոնշախի (14րդ) հիւրը պիտի ըլլայ պիտի փորձէ նեղ կացութեան չմտնուիլ, որովհետեւ անիկա իր դաշտին վրայ կատարած վերջին երեք մրցումներուն բոլորին ալ յաղթանակ արձանագրած է:

Ստորեւ՝ 25րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

●ԱՅՍՕՐ	Լացիո Ռոմա - Փարմա
●ՎԱՂԸ	Պոլոնիա - Փերուճիա
	Պրեշիա - Ռեճինա
	Լէչէ - Աթալնա
	Նափոլի - Ա. Սէ. Միլան
	Ուտինէպէ - Պարի
	Վերոնա - Եուվենթուս
	Ինթեր Միլան - Վիչենցա
●ԵՐԿՈՒՇԱԲԵՐ	Ֆիորենտինա - Ս. Էս. Ռոմա

## ԹԵՆԻՍ. ՏԵՅՎԻՍ ԲԱԺԱԿ

### ԼԻԲԱՆԱՆ - ՅՈՆԿ ԲՈՆԿ՝ 1-0

Ասիա - Ովկիանիա գօտիէն ներս տեղի ունեցող թենիսի Տէյվիս բաժակի մրցաշարին, երէկ Եարպէի մէջ Լիբանան (Բ. Խմբակ) 1-0 արդիւնքով յառաջացաւ իր մրցակիցին՝ Հոնկ Բոնկի վրայ:

Երէկուան բացման մրցումին (անհատական) Ալի Համառն պարտութեան մատնեց իր մրցակիցը Եւլիվին Թոնկը՝ 6-7, 6-1, 6-4 եւ 6-4 արդիւնքով:

## ԱՐՄԵՆԱԼ - ԹՈՒԹԵՆ ՀԱՄ ԼՈՆՏՈՆԵԱՆ ՏԵՐՊԻ

Անգլիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 32րդ շահագրուանի մրցումներուն, շարաթաւերին տեղի կ'ունենան հինգ ճակատումներ, ինչպէս նաեւ Անգլիոյ ֆուտբոլի բաժակի մրցաշարին կիսաարտական շահագրուանի մրցումները:

Բաժակի մրցումները պիտի ըլլան աւելի հետաքրքրական, քան ախոյեանութեան մրցումները, նկատի ունենալով, որ այդքան ալ զօրաւոր ճակատումներ չկան շարաթաւերին, որովհետեւ կարգ մը զօրաւոր խումբեր մրցումներ չունին կատարելիք:

Բաժակի մրցաշարին գծով, հետաքրքրական պիտի ըլլայ լոնտոնեան քաղաքի երկու կազմերուն՝ Արսենալի եւ Թոթենհամի միջեւ տեղի ունենայիք ճակատումը, մինչ երկրորդին, կը կարծուի, որ Լիվըրփուլ աւելի հանգիստ մրցում մը կատարէ Բ. դասակարգին մաս կազմող Ուիթմոյի դէմ: Լոնտոնեան տեղափոխ տեղի պիտի ունենայ Մանչեսթըրի «Օլդ Թրէֆորտ» դաշտին վրայ, իսկ Ուիթմոյ - Լիվըրփուլ մրցումը «Վիլա Փարք» դաշտին վրայ (Պրիմինկսէմ):

Լիվըրփուլ, որ երկու օր առաջ յաղթանակէ համագոր հաւասարութիւն մը արձանագրած էր Պարսելոնայի դէմ անոր դաշտին՝ «Նուրամփի» մէջ (Նո. Ե. Է. Ֆ. Ա.ի բաժակի մրցաշարը), համեմատաբար աւելի հանգիստ մրցում մը ունի կատարելիք, քան տեղի ունենայիք լոնտոնեան տեղափոխ մրցումը: Սակայն հակառակ յայ իրողութեան ֆուտբոլի աշխարհին մէջ որեւէ ժամանակ անակնկալներ կրնան պատահիլ, հետեւաբար այս մէկը կը նշանակէ, թէ որեւէ խումբ արհամարհելի պէտք չէ նկատել:

Թոթենհամի նոր մարզիչ Կլէն Հատըր, այսպիսով վաղը իր առաջին մրցումը պիտի կատարէ իր նոր կազմին հետ, թէեւ ան անցեալ շարաթաւերին ներկայ եղած էր Թոթենհամի կատարած մրցումին՝ դարձեալ Արսենայի դէմ (Անգլիոյ ախոյեանութիւն). մրցումը վերջ գտած էր մարզիչ Արսէն Վենկէճի յաղթանակով (2-0): Արսենայի դարձեալ դաշտ պիտի ներկայանայ առանց հոյանտացի յառաջապահ Տենիս Պրեկամփի (վիրատը): Ստորեւ՝ շարաթաւերին տեղի ունենայիք մրցումներուն յայտագիրը:

ԱՅՍՕՐ

(Ախոյեանութիւն)
Ասթոն Վիլա - Ուեսթ Համ
Տերպի Գաուրթի - Չելսի
Լիծ - Սաութհեմփթըն
Լայսթըր Սիթի - Քովենթրի

ՎԱՂԸ

(Անգլիոյ բաժակ. կիսաարտական)
Արսենալ - Թոթենհամ
Ուիթմոյ - Լիվըրփուլ
(Ախոյեանութիւն)
Եվըրթըն - Մանչեսթըր Սիթի

ԵՐԿՈՒՇԱԲԵՐ

(Ախոյեանութիւն)
Միլըրլայքո - Սանտըրլէմտ

## ՍՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ԱՅՍՕՐ ԿԸ ՍԿՍԻ 29ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 29րդ հանգրուանի բացման, այսօր տեղի պիտի ունենայ միայն մէկ մրցում՝ Ռայօ Վալեթանօ - Վալենսիա, մինչ մնացեալ բոլոր մրցումները տեղի պիտի ունենան վաղը:

Վալենսիա (3րդ), որ իր կատարած վերջին երկու մրցումներուն (ախոյեանութեան գծով) պարտութիւն կրելով, այժմ Թալէ կէտով ետ կը մնայ պարագլուխի դիրքը գրաւող Ռեալ Մատրիտէն, Վալենսիայի դաշտէն պիտի փորձէ անպայման յաղթական վերադառնալ, աւելիով չիտոնաւայու համար Ռեալ Մատրիտէն:

Ռեալ Մատրիտ, որ այժմ հինգ կէտի առաւելութիւն ունի 2րդ դիրքը գրաւող Տեֆորթիօ Քորուսի վրայ, հիւրը պիտի ըլլայ Լաս Փայմասի (13րդ): Մայրաքաղաքի կազմին պիտի բացակային Ֆերնանտօ Շիբօ (կախակայտուած), Ռուլլ Կոկալչես Եւ Տեֆերօ Մանիթիս (վիրատը), իսկ Քլոս Մաթելիէի մասնակցութիւնը կը մնայ կասկածելի (վիրատը):

Տեֆորթիօ Քորուս ղեկավար մրցում մը ունի կատարելիք, երբ այցելէ Ռեալ Սարալիսայի դաշտը: Հակառակ անոր, որ Սարալիսա այժմ կը գրաւէ 14րդ դիրքը, սակայն անիկա այս եղանակին իր դաշտին վրայ ցարդ պարտութիւն չէ կրած, ինչ որ վատահարք կրնայ դժուարացնել Տեֆորթիօ Քորուսի առաքելութիւնը: Պարսելոնա (4րդ), որ այժմ տասը կէտով ետ կը մնայ պարագլուխի դիրքը գրաւող Ռեալ Մատրիտէն, հիւրը պիտի ըլլայ Վիսթալի (6րդ):

Ստորեւ՝ 29րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

ԱՅՍՕՐ

Ռայօ Վալեթանօ - Վալենսիա
--------------------------

ՎԱՂԸ

Ալաւես - Ռեալ Վալադոլիդ
Սելթա Վիկօ - Աթլետիկօ Պիլայես
Էսպանիոլ - Մալաղա
Լաս Փայմաս - Ռեալ Մատրիտ
Նումանսիա - Մայորքա
Օսասունա - Ռասիսկ Սանթանտեր
Ռեալ Սոսիէտատ - Ռե

